Թողեր է զցամաքն ի բաց, երերուն ի ջուրն կու գընայ.
Շիներ է փայտեայ տապան, այն տախտակն յապով կու կենայ.
Օր մի ընկըղմի տապան, լուկ լինայ ձըկան նաֆաղայ:

Ի Ե.

Շատ է՝ր յայդ ծովերդ մըտեր, լողացար ու այլ չես ելներ.
Մօտ ի յալին ես եկեր, զիս սարսափն ու ղողն է պատեր:
–Բազկիդ զենեհար, ընկե՛ր, թէ լողա՛ ա՛ռ զիս ե՛լ ի վեր.
Շատ դու ինձ ատեն հասեր, հիմիկ ինձ է՞ր ես խըռովեր:
Դարձաւ ինձ ճուղապ արաւ՝ – Ձքեզ մեղաց ալիքն է թացեր,
Շատ մարդ ի յայդ ծովդ ընկեր, մոլորեր ու անհուն կորեր:
–Եզեր մօտեցեր եմ ես, վախենեմ քարի դիպենամ,
Քակի իմ աղւոոր շինուածս ու տախտա՛կըս մէկմէկանայ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ծառըն տերեւովն աղէկ երբ երակ կենան սիրելի.
Ղազալն երբ ի ծառն կնկնի, նա տերեւն ի վար կու թափի:
Մակտի՛ք, ձեր արե՛ւն ասեմ, երեւին խիստ հաւ կու լինի.
Աստուած տայ ծառին տերեւ, տերեւին այլ ծառ չիգըտուի:

Բ.

Բանիկ մի արի ղալատ որ օձուն ձագըն սիրեցի,
Ես վըստահութիւն արի ’ւ ի օձուն դուռըն գընացի.
Ձագուն մարն ի դուս ելաւ, զիս նենգեց, ես նըստայ լացի.
Արժան եմ ես այս լացիս, որ օձուն եղայ սիրելի:
Այնչափ կանչեցին յետ ինձ թէ՝ Քո բանդ ի՞նչ խօշ կու լինի.
Ահա կըտրեցաւ չըւանն, ի յամէն դիաց կու քակի:
Խելօք մազմընին հարցան թէ՝ Քակած չըւանն ոլորի՞:
–Մանուկն երբ սապռով լինի, նա շուտով ոլոր ընկընի:

Դ.

Նա այն ի՝նչ մանուկ լինի, որ ի մէկ ձայն է զահընդի.
Մանուկ այն մանկանն ասեմ որ իւրեն խոռըն կանգընի,
Թ’ ապրի նա անուն հանէ, թէ մեռնի՝ հաշուէ չիլինի: